## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ

0095, ՀՀ, Երևան, Մ.Բաղրամյան պող. 19,

**Հայաստանի Հանրապետության**
**Ազգային ժողովի նախագահին**

Համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 109-րդ հոդվածի 1-ին մասի և «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 65-րդ հոդվածի 1-ին մասի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով Ձեզ եմ ներկայացնում «Պետական կենսաթոշակների մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» և «Պետական նպաստների մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթը:

Ազգային ժողովի աշխատակարգի 25-րդ կետի համաձայն գրությանը կցվում են՝

ա) նախագիծը (հիմնական զեկուցող՝ Աղվան Վարդանյան),

բ) նախագծի ընդունման հիմնավորումը,

գ) գործող օրենքում փոփոխվող հոդվածի մասին տեղեկանքը,

Խնդրում եմ օրենքի ներկայացված նախագիծը սահմանված կարգով դնել շրջանառության մեջ:

**Հարգանքով՝**

ԱՂՎԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

**Նախագիծ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# Օ Ր Ե Ն Ք Ը

# «ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության 2013 թվականի դեկտեմբերի 12-ի ՀՕ-154-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 39-րդ հոդվածը լրացնել նոր՝ 13-րդ մասով՝

«13. Ծերության նպաստի, հաշմանդամության նպաստի և կերակրողին կորցնելու դեպքում նպաստի չափը չի կարող պակաս նվազագույն կենսաթոշակի չափից:»:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2022 թվականի հունվարի 1-ից:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը սույն օրենքի կիրարկումն ապահովող իրավական ակտերն ընդունում է մինչև 2021 թվականի դեկտեմբերի 20-ը:

ՏԵՂԵԿԱՆՔ

ԼՐԱՑՎՈՂ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**Հոդված 39. Օրենքի ուժի մեջ մտնելը**

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2014 թվականի հունվարի 1-ից:

2. Մինչև պետական նպաստների իրավունքի նորմեր պարունակող իրավական ակտերը սույն օրենքին համապատասխանեցնելը դրանք կիրառվում են այնքանով, որքանով չեն հակասում սույն օրենքին:

3. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից ուժը կորցրած ճանաչել «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության 2005 թվականի հոկտեմբերի 24-ի ՀՕ-205-Ն օրենքը:

4. Սույն օրենքի 24-26-րդ հոդվածների դրույթները տարածվում են այն դեպքերի վրա, երբ երեխան ծնվել է 2014 թվականի հունվարի 1-ին և դրանից հետո: Եթե երեխան ծնվել է մինչև 2014 թվականի հունվարի 1-ը, ապա երեխայի ծննդյան միանվագ նպաստը նշանակվում և վճարվում է մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը սահմանված կարգով:

5. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո մինչև 2014 թվականի հունվարի 1-ը «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով նշանակված ծերության սոցիալական, հաշմանդամության սոցիալական և կերակրողին կորցնելու դեպքում սոցիալական կենսաթոշակները (անկախ կենսաթոշակ ստանալու իրավունքը և կենսաթոշակ վճարելը դադարեցված լինելուց) վերանվանվում են համապատասխանաբար ծերության, հաշմանդամության և կերակրողին կորցնելու դեպքում նպաստի՝ անկախ սույն օրենքով սահմանված ծերության սոցիալական, հաշմանդամության սոցիալական և կերակրողին կորցնելու դեպքում սոցիալական նպաստի իրավունքից:

6. Սույն օրենքով սահմանված կարգով ծերության, հաշմանդամության և կերակրողին կորցնելու դեպքում նպաստ ստանալու իրավունքը վերականգնելու, վճարելը վերսկսելու դեպքում (այդ թվում՝ դիմումի հիման վրա) «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով նշանակված ծերության սոցիալական, հաշմանդամության սոցիալական և կերակրողին կորցնելու դեպքում սոցիալական կենսաթոշակի իրավունքը չի վերանայվում: Այս դեպքում «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով ծերության սոցիալական, հաշմանդամության սոցիալական և կերակրողին կորցնելու դեպքում սոցիալական կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցնելու օրը համարվում է ծերության, հաշմանդամության և կերակրողին կորցնելու դեպքում նպաստ ստանալու իրավունքը դադարեցնելու օր, իսկ չվճարված ծերության, հաշմանդամության և կերակրողին կորցնելու դեպքում նպաստի գումարում հաշվառվում է նաև դիմելու ամսվան նախորդող մեկ տարվա այն ժամանակահատվածի չվճարված սոցիալական կենսաթոշակի գումարը, որի ընթացքում անձը ունեցել է «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ սոցիալական կենսաթոշակ ստանալու իրավունք:

7. Օտարերկրյա քաղաքացուն, անկախ հղիության և ծննդաբերության արձակուրդի իրավունք ունենալու ժամանակահատվածի առաջին օրվա դրությամբ առնվազն երեք տարի անընդմեջ Հայաստանի Հանրապետությունում բնակության վայրի հասցեով հաշվառված լինելու հանգամանքից, սույն օրենքով սահմանված կարգով նշանակվում և վճարվում է չաշխատող անձի մայրության նպաստ, եթե հղիության և ծննդաբերության արձակուրդի իրավունք ունենալու ժամանակահատվածի առաջին օրը մինչև 2017 թվականի հունվարի 1-ն է:

8. Եթե նոր ծնված երեխան ծնվել է մինչև 2017 թվականի հունվարի 1-ը, ապա երեխայի ծննդյան միանվագ նպաստը սույն օրենքով սահմանված կարգով նշանակվում և վճարվում է նաև՝

1) նոր ծնված երեխայի ծննդի պետական գրանցումն օտարերկրյա պետության իրավասու մարմնի կողմից իրականացվելու դեպքում՝ անկախ ծնողի և նոր ծնված երեխայի՝ դիմելու օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետությունում գտնվելու հանգամանքից.

2) օտարերկրյա քաղաքացուն՝ անկախ երեխայի ծննդյան օրվա դրությամբ առնվազն երեք տարի անընդմեջ Հայաստանի Հանրապետությունում բնակության վայրի հասցեով հաշվառված լինելու հանգամանքից:

9. Խնամքի նպաստը վճարվում է անկանխիկ կամ կանխիկ եղանակով՝ դիմումի հիման վրա, եթե նպաստը նշանակվել է՝

1) Երևան, Գյումրի և Վանաձոր քաղաքներում՝ մինչև 2021 թվականի հունվարի 1-ը.

2) այլ քաղաքներում (բացառությամբ սույն մասի 1-ին կետում նշված քաղաքների)՝ մինչև 2021 թվականի հուլիսի 1-ը.

3) 1000 և ավելի բնակիչ ունեցող գյուղերում՝ մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը.

4) մինչև 1000 բնակիչ ունեցող գյուղերում՝ մինչև 2023 թվականի հուլիսի 1-ը:

10. Գյուղերի ցանկը, ըստ բնակչության քանակի, հաստատում է Կառավարությունը:

11. Եթե սույն հոդվածի 9-րդ մասում նշված ժամկետներից հետո ներկայացվում է խնամքի նպաստ վճարելը վերսկսելու, խնամքի նպաստ ստանալու իրավունքը վերականգնելու դիմումը, ապա խնամքի նպաստը վճարվում է անկանխիկ եղանակով՝ հաշվի առնելով սույն օրենքի 28-րդ հոդվածի 8-րդ և 12-րդ մասերով նախատեսված բացառությունները:

12. Մինչև սույն հոդվածի 9-րդ մասում նշված ժամկետները նշանակված խնամքի նպաստը կանխիկ եղանակով վճարվում է մինչև դիմումի (այդ թվում՝ սույն հոդվածի 11-րդ մասում նշված դիմումի) հիման վրա վճարման եղանակը փոխելը: Եթե սույն մասում նշված դիմումը չի ներկայացվում, ապա նպաստի վճարումը շարունակվում է անկանխիկ եղանակով, Կառավարության սահմանած կարգով ընտրված բանկի կամ Ազգային օպերատորի միջոցով՝

1) Երևան, Գյումրի և Վանաձոր քաղաքներում՝ 2021 թվականի հուլիսի 1-ից.

2) այլ քաղաքներում (բացառությամբ սույն մասի 1-ին կետում նշված քաղաքների)՝ 2022 թվականի հունվարի 1-ից.

3) 1000 և ավելի բնակիչ ունեցող գյուղերում՝ 2023 թվականի հունվարի 1-ից.

4) մինչև 1000 բնակիչ ունեցող գյուղերում՝ 2024 թվականի հունվարի 1-ից:

«13. Ծերության նպաստի, հաշմանդամության նպաստի և կերակրողին կորցնելու դեպքում նպաստի չափը չի կարող պակաս նվազագույն կենսաթոշակի չափից:»:

Նախագիծ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# Օ Ր Ե Ն Ք Ը
# «ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-243-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 55-րդ հոդվածը լրացնել նոր՝ 13-րդ մասով՝

«13. Նվազագույն կենսաթոշակի չափը չի կարող պակաս լինել պարենային զամբյուղի արժեքից՝ սկսած 2022 թվականի հունվարի 1-ից:»

**Հոդված 2**. Օրենքի 55-րդ հոդվածը լրացնել նոր՝ 14-րդ մասով՝

«14. Միջին աշխատանքային կենսաթոշակի չափը չի կարող պակաս լինել՝

1) սպառողական զամբյուղի արժեքի 70 տոկոսից՝ սկսած 2022 թվականի հունվարի 1-ից,

2) սպառողական զամբյուղի արժեքի 80 տոկոսից՝ սկսած 2023 թվականի հունվարի 1-ից,

3) սպառողական զամբյուղի արժեքի 85 տոկոսից՝ սկսած 2024 թվականի հունվարի 1-ից,

4) սպառողական զամբյուղի արժեքի 90 տոկոսից՝ սկսած 2025 թվականի հունվարի 1-ից,

5) սպառողական զամբյուղի արժեքից՝ սկսած 2026 թվականի հունվարի 1-ից:»:

**Հոդված 3**. Օրենքի 55-րդ հոդվածը լրացնել նոր՝ 15-րդ մասով՝

«15. Սույն հոդվածի 13-րդ և 14-րդ մասերի կիրառման նպատակով որպես պարենային և սպառողական զամբյուղների արժեքներ, հիմք են ընդունվում տվյալ բյուջետային տարվան նախորդող տարվա երկրորդ եռամսյակի միջին ընթացիկ գներով հաշվարկված՝ Ազգային վիճակագրական կոմիտեի կողմից հրապարակած պարենային և սպառողական զամբյուղների ամսական արժեքները:

Պարենային զամբյուղում ներառվող սննդամթերքի կազմը, կառուցվածքը և էներգետիկան, պարենային և սպառողական զամբյուղների ամսական արժեքները հաշվարկելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

**Հոդված 4.** Օրենքի 55-րդ հոդվածը լրացնել նոր՝16-րդ մասով՝

«16. Սույն հոդվածի 14-րդ մասի կիրառման նպատակով միջին աշխատանքային կենսաթոշակի չափը հաշվարկվում է տվյալ բյուջետային տարվան նախորդող տարվա հունիսի

1-ի դրությամբ կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող կենսաթոշակառուներին վճարման ենթակա՝ հունիս ամսվա կենսաթոշակի գումարը (անկախ կենսաթոշակը վճարվելու հանգամանքից) այդ կենսաթոշակառուների թվի վրա բաժանելու միջոցով:»:

**Հոդված 5**. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2022 թվականի հունվարի 1-ից:
Հայաստանի Հանրապետության կառավարությունը սույն օրենքի կիրարկումն ապահովող իրավական ակտերն ընդունում է մինչև 2021 թվականի դեկտեմբերի 20-ը:

# ՏԵՂԵԿԱՆՔ

## ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**Հոդված 55. Անցումային դրույթներ**

1. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի նոյեմբերի 19-ի ՀՕ-519 օրենքով նշանակված կենսաթոշակը վերահաշվարկելու համար լրացուցիչ փաստաթղթեր ներկայացնելու դեպքում կենսաթոշակը վերահաշվարկվում է սույն օրենքով սահմանված կարգով: Այդ դեպքում կենսաթոշակի գործում առկա՝ օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված ստաժում առանձնապես ծանր, առանձնապես վնասակար պայմաններում աշխատած ժամանակահատվածը, քաղաքացիական ավիացիայի աշխատողների՝ թռիչքային ժամերով հաշվարկված ժամկետները, վկայությամբ հաստատված ժամանակահատվածը, երեխաների խնամքի ժամանակահատվածը, ուսումնական հաստատություններում առկա (ցերեկային) ուսման ժամանակահատվածն աշխատանքային ստաժում պահպանվում են նույնությամբ:

Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության 1998 թվականի հոկտեմբերի 27-ի ՀՕ-258 օրենքով նշանակված կենսաթոշակը վերահաշվարկվում է սույն օրենքով սահմանված կարգով: Եթե վերահաշվարկված կենսաթոշակի չափը ցածր է մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը նշանակված կենսաթոշակի չափից (առանց հավելումների), ապա կենսաթոշակը վճարվում է նախկին չափով:

Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը միաժամանակ «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի նոյեմբերի 19-ի ՀՕ-519 օրենքով և «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության 1998 թվականի հոկտեմբերի 27-ի ՀՕ-258 օրենքով կենսաթոշակ ստացող անձանց՝ երկու կենսաթոշակ ստանալու իրավունքը պահպանվում է մինչև «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34.1-ին հոդվածով սահմանված դրամական օգնություն նշանակելը:

2. «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի նոյեմբերի 19-ի ՀՕ-519 օրենքի հիման վրա ձևավորված անհատական (անձնավորված) հաշվառման տվյալների բազայում տվյալներն ամբողջացվում են (այդ թվում՝ 2012 թվականի տվյալները լիազոր մարմին են ներկայացվում), և դրանք, ինչպես նաև կենսաթոշակառուների հաշվառման տեղեկատվական բազա ներառված տվյալները պետական կենսաթոշակային համակարգի շտեմարան են ներառվում Կառավարության սահմանած կարգով:

3. Մինչև 2010 թվականի նոյեմբերի 1-ը մահացած՝ զինվորական կենսաթոշակ ստացած կենսաթոշակառուի հուղարկավորությունը կատարած անձին թաղման նպաստը վճարվում է մահացածի կենսաթոշակի (ներառյալ՝ կենսաթոշակին տրվող հավելումները) տասնհինգապատիկի չափով, իսկ սույն օրենքի 44-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերում նշված անձանց մահվան դեպքում՝ չորս հարյուր երեսունհինգ հազար դրամ:

4. Սկսած 2014 թվականի հունվարի 1-ից՝ սույն օրենքի 15-րդ հոդվածով սահմանված կարգով (այդ թվում՝ հաշվի առնելով օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասը) հաշվարկված հաշմանդամության աշխատանքային կենսաթոշակին տրվում է հավելում՝

1) առաջին խմբի համար՝ աշխատանքային կենսաթոշակի չափը հաշվարկելու համար հիմնական կենսաթոշակի 40 տոկոսի չափով.

2) երկրորդ խմբի համար՝ աշխատանքային կենսաթոշակի չափը հաշվարկելու համար հիմնական կենսաթոշակի 20 տոկոսի չափով:

5. Կենսաթոշակառուին (անչափահաս կամ խնամակալության տակ գտնվող կենսաթոշակառուի դեպքում՝ կենսաթոշակառուի օրինական ներկայացուցչին՝ ծնողին, որդեգրողին կամ խնամակալին) սխալմամբ (Հայաստանի Հանրապետության օրենքի խախտմամբ) ավել վճարված կենսաթոշակի գումարների չափում չեն հաշվարկվում այն գումարները, որոնք վճարվել են մինչև 2017 թվականի հունվարի 1-ը, բացառությամբ այն դեպքի, երբ կենսաթոշակի գումարը վճարվել է՝

1) կենսաթոշակառուի մահվան ամսվան հաջորդող ամիսների համար կամ Հայաստանի Հանրապետության հետ կենսաթոշակային ապահովության բնագավառում միջազգային պայմանագիր կնքած պետությունում կենսաթոշակառուին կենսաթոշակ նշանակելու ամսվան հաջորդող ամիսների համար կամ

2) Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված արարքի հետևանքով, որը հաստատված է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով:

6. 2017 թվականի հունվարի 1-ից դադարեցվում են սույն օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիման վրա մինչև 2017 թվականի հունվարի 1-ը սխալմամբ (Հայաստանի Հանրապետության օրենքի խախտմամբ) ավել վճարված կենսաթոշակի գումարները Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վերականգնելու նպատակով կատարվող պահումները:

7. Մինչև 2017 թվականի հունվարի 1-ը սխալմամբ (Հայաստանի Հանրապետության օրենքի խախտմամբ) ավել վճարված և 2017 թվականի հունվարի 1-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փաստացի վերականգնված գումարները չեն վերադարձվում:

8. Եթե կենսաթոշակ ստանալու իրավունքը հինգ տարի անընդմեջ կենսաթոշակ չվճարելու հիմքով դադարեցվել է մինչև 2017 թվականի հոկտեմբերի 1-ը, ապա՝

1) կենսաթոշակ ստանալու իրավունքը վերականգնվում է, կենսաթոշակ վճարելը վերսկսվում է դիմումի հիման վրա՝ դիմելու ամսին հաջորդող ամսվա 1-ից, եթե կենսաթոշակառուն, իսկ 14 տարեկան չդարձած անչափահաս կենսաթոշակառուի կամ խնամակալության տակ գտնվող կենսաթոշակառուի դեպքում (եթե կենսաթոշակառուն Հայաստանի Հանրապետությունում է)՝ նրա օրինական ներկայացուցիչը (ծնողը, որդեգրողը կամ խնամակալը) գրավոր դիմումը և անհրաժեշտ մյուս փաստաթղթերը ներկայացնում է անձամբ.

2) կենսաթոշակ ստանալու իրավունքը վերականգնվելու դեպքում չվճարված կենսաթոշակի գումարը վճարվում է դիմումը ներկայացնելու ամսվան նախորդող մեկ տարվա այն ժամանակահատվածի համար, որի ընթացքում կենսաթոշակառուն կենսաթոշակ ստանալու իրավունք է ունեցել, բայց ոչ ավելի, քան մինչև կենսաթոշակ ստանալու իրավունքը հինգ տարի անընդմեջ կենսաթոշակ չվճարելու հիմքով դադարեցվելը.

3) անձի մահանալու դեպքում հուղարկավորությունը կատարած անձին թաղման նպաստ չի նշանակվում (չի վճարվում), իսկ մահվան պատճառով չվճարված կենսաթոշակի գումարը հաշվարկվում է կենսաթոշակառուի մահվան ամսվանից հաշված՝ նախորդող մեկ տարվա այն ժամանակահատվածի համար, որի ընթացքում նա կենսաթոշակ ստանալու իրավունք է ունեցել, բայց ոչ ավելի, քան մինչև կենսաթոշակ ստանալու իրավունքը հինգ տարի անընդմեջ կենսաթոշակ չվճարելու հիմքով դադարեցվելը: Այս դեպքում չվճարված կենսաթոշակի գումարը վճարվում է՝ հաշվի առնելով Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասը:

9. Կենսաթոշակը վճարվում է անկանխիկ կամ կանխիկ եղանակով՝ կենսաթոշակառուի դիմումի հիման վրա, եթե կենսաթոշակը նշանակվել է՝

1) Երևան, Գյումրի և Վանաձոր քաղաքներում՝ մինչև 2021 թվականի հունվարի 1-ը.

2) այլ քաղաքներում (բացառությամբ սույն մասի 1-ին կետում նշված քաղաքների)՝ մինչև 2021 թվականի հուլիսի 1-ը.

3) 1000 և ավելի բնակիչ ունեցող գյուղերում՝ մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը.

4) մինչև 1000 բնակիչ ունեցող գյուղերում՝ մինչև 2023 թվականի հուլիսի 1-ը:

10. Գյուղերի ցանկը, ըստ բնակչության քանակի, հաստատում է Կառավարությունը:

11. Եթե սույն հոդվածի 9-րդ մասում նշված ժամկետներից հետո ներկայացվում է կենսաթոշակ վճարելը վերսկսելու, կենսաթոշակ ստանալու իրավունքը վերականգնելու, կենսաթոշակը վերահաշվարկելու, կենսաթոշակի տեսակը փոխելու դիմում, ապա կենսաթոշակը վճարվում է անկանխիկ եղանակով՝ հաշվի առնելով սույն օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով և սույն հոդվածի 12-րդ մասով նախատեսված բացառությունները:

12. Մինչև սույն հոդվածի 9-րդ մասում նշված ժամկետները նշանակված կենսաթոշակը կանխիկ եղանակով վճարվում է մինչև դիմումի (այդ թվում՝ սույն հոդվածի 11-րդ մասում նշված դիմումի) հիման վրա վճարման եղանակը փոխելը: Եթե սույն մասում նշված դիմումը չի ներկայացվում, ապա կենսաթոշակի վճարումը շարունակվում է անկանխիկ եղանակով, Կառավարության սահմանած կարգով ընտրված բանկի կամ Ազգային օպերատորի միջոցով՝

1) Երևան, Գյումրի և Վանաձոր քաղաքներում՝ 2021 թվականի հուլիսի 1-ից.

2) այլ քաղաքներում (բացառությամբ սույն մասի 1-ին կետում նշված քաղաքների)՝ 2022 թվականի հունվարի 1-ից.

3) 1000 և ավելի բնակիչ ունեցող գյուղերում՝ 2023 թվականի հունվարի 1-ից.

4) մինչև 1000 բնակիչ ունեցող գյուղերում՝ 2024 թվականի հունվարի 1-ից:

«13. Նվազագույն կենսաթոշակի չափը չի կարող պակաս լինել պարենային զամբյուղի արժեքից՝ սկսած 2022 թվականի հունվարի 1-ից:

14. Միջին աշխատանքային կենսաթոշակի չափը չի կարող պակաս լինել՝

6) սպառողական զամբյուղի արժեքի 70 տոկոսից՝ սկսած 2022 թվականի հունվարի 1-ից,

7) սպառողական զամբյուղի արժեքի 80 տոկոսից՝ սկսած 2023 թվականի հունվարի 1-ից,

8) սպառողական զամբյուղի արժեքի 85 տոկոսից՝ սկսած 2024 թվականի հունվարի 1-ից,

9) սպառողական զամբյուղի արժեքի 90 տոկոսից՝ սկսած 2025 թվականի հունվարի 1-ից,

10) սպառողական զամբյուղի արժեքից՝ սկսած 2026 թվականի հունվարի 1-ից:

15. Սույն հոդվածի 13-րդ և 14-րդ մասերի կիրառման նպատակով որպես պարենային և սպառողական զամբյուղների արժեքներ, հիմք են ընդունվում տվյալ բյուջետային տարվան նախորդող տարվա երկրորդ եռամսյակի միջին ընթացիկ գներով հաշվարկված՝ Ազգային վիճակագրական կոմիտեի կողմից հրապարակած պարենային և սպառողական զամբյուղների ամսական արժեքները:

Պարենային զամբյուղում ներառվող սննդամթերքի կազմը, կառուցվածքը և էներգետիկան, պարենային և սպառողական զամբյուղների ամսական արժեքները հաշվարկելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

16. Սույն հոդվածի 14-րդ մասի կիրառման նպատակով միջին աշխատանքային կենսաթոշակի չափը հաշվարկվում է տվյալ բյուջետային տարվան նախորդող տարվա հունիսի 1-ի դրությամբ կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող կենսաթոշակառուներին վճարման ենթակա՝ հունիս ամսվա կենսաթոշակի գումարը (անկախ կենսաթոշակը վճարվելու հանգամանքից) այդ կենսաթոշակառուների թվի վրա բաժանելու միջոցով:

## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## «ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**1. Իրավական ակտի ընդունման նպատակը և առաջարկվող լուծումները.**

Ներկայացվող նախագծերի նպատակը կենսաթոշակառուների և տարեց բնակչության սոցիալական պաշտպանվածության մակարդակի շարունակական բարելավումն է:

Կենսաթոշակային համակարգը և պետական նպաստները չպետք է դիտարկվեն որպես պետության կողմից ուղղակի օգնություն, այլև դրանց բուն նպատակը աղքատության հաղթահարումն է և հնարավորինս արժանապատիվ կյանքի ապահովումը քաղաքացիների համար: Զուր չէ, որ ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետությունում մարդը բարձրագույն արժեք է: Մարդու անօտարելի արժանապատվությունն իր իրավունքների և ազատությունների անքակտելի հիմքն է», իսկ արդեն նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հարգումն ու պաշտպանությունը հանրային իշխանության պարտականություններն են:» Արժանապատվություն տերմինը ինքնին կարելի է դիտարկել որպես ինքնավար-ինքնուրույն տերմին, որի մեկնաբանության արդյունքում ակնհայտ է Սահմանադիրի նպատակը՝ Մարդու և քաղաքացու արժանապատիվ կյանքի ապահովումը, որն իր մեջ ընդգրկում է նաև սոցիալ-տնտեսական արժանապատվություն: Ի ապացուցումն սրա Սահմանադրության 1-ին հոդվածի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետությունն ինքնիշխան, ժողովրդավարական, **սոցիալական**, իրավական պետություն է:»

Սահմանադրության 83-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, օրենքին համապատասխան, ունի մայրության, բազմազավակության, հիվանդության, հաշմանդամության, աշխատավայրում դժբախտ պատահարների, **խնամքի կարիք ունենալու, կերակրողին կորցնելու, ծերության, գործազրկության,** աշխատանքը կորցնելու և այլ դեպքերում **սոցիալական ապահովության իրավունք**:»

Հետևաբար Սահմանադիրի նպատակը ոչ թե ինքնանպատակ կամ անորոշ չափով նպաստի կամ կենսաթոշակի տրամադրումն է, այլև դրա նվազագույն շեմի ապահովումը, որը ենթադրվում է, որ չի կարող պակաս լինել սպառողական զամբյուղի արժեքից: Սպառողական զամբյուղի արժեքի չափով կենսաթոշակի և նպաստի ապահովումը առանց հաշվարկված, ճիշտ և հաջողված տնտեսական քաղաքականության, անհնարին է: Հարկ է նաև նշել, որ նշված կարևորագույն նպատակին հասնելու համար անհրաժեշտ են մեծ, բայց ոչ անհնարին ֆինանսական ռեսուրսներ և աստիճանաբար իրավիճակային բարելավում, ինչով պայմանավորված օրենսդրական նախագիծը բարձրացնում է կենսաթոշակի և նպաստի չափերը աստիճանաբար: Նման մոտեցումը թույլ կտա ոչ միայն էապես բարձրացնել պետության հատուկ ուշադրության կարիքը ունեցող անձնանց սոցիալական վիճակը, այլև կլինի համապարփակ և հնարավոր ու իրատեսական քայլ՝ պետության պոզիտիվ պարտականությունների կատարման տեսանկյունից:

**2. Տնտեսական տվյալներ.**

Որպես կենսաթոշակային և նպաստային չափերի վերանայման անհրաժեշտություն՝ վերաբերելի է ԱՐՄՍՏԱՏ-ի կողմից ըստ Առողջապահության նախարարության կողմից մշակված սննդամթերքի կազմի, կառուցվածքի և էներգետիկայի հաշվակված նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը 2021թ. I եռամսյակի միջին ընթացիկ գներով հետևյալն է[1]

| Պարենային զամբյուղի արժեքը | |
|---|---|
| Տարեկան | 431 796.6 դրամ |
| ամսական | 35 983.0 դրամ |
| Նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը | |
| Տարեկան | 798 823.7 դրամ (գործակից 1.85) |
| ամսական | 66 568.6 դրամ |

Համաշխարհային բանկի մեթոդաբանությամբ՝ ըստ 2019 թ. ԱՐՄՍՏԱՏ-ի կողմից 5184 տնային տնտեսություններում իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության արդյունքների հիման վրա փաստացի ձևավորված սպառողական զամբյուղի, նվազագույն սպառողական զամբյուղի արժեքը 2021թ. I եռամսյակի միջին ընթացիկ գներով ունի հետևյալ պատկերը[2].

| | Մեկ ամսում սպառված սննդամթերքի արժեքը 1 շնչի հաշվով, դրամ | Մեկ ամսում սպառված սննդամթերքի արժեքը 1 մեծահասակի հաշվով, դրամ |
|---|---|---|
| Պարենային զամբյուղի ամսական արժեքը | 27 772.7 դրամ | 30 927.4 դրամ |
| Նվազագույն սպառողական զամբյուղի ամսական արժեքը | 51 379.5 դրամ | 57 215.7 դրամ (գործակից 1.85 1) |

Իսկ արդեն ըստ ԱՎԿ հաջորդ վերաբերելի հրապարակման՝ 2-րդ եռամսյակի միջին ընթացիկ գներով պարենային զամբյուղի արժեքը կազմում է 37 861 դրամ, սպառողական զամբյուղների արժեքը՝ 70 044 դրամ: Հաշվի առնելով վերը նշվածը՝ առաջարկվում է օրենքով սահմանել, որ սկսած 2022 թվականի հունվարի 1-ից՝ Նվազագույն կենսաթոշակի չափը չի կարող պակաս լինել պարենային զամբյուղի արժեքից 37861 դրամից:

Միաժամանակ, առաջարկվում է միջին կենսաթոշակի չափը ՀՀ կառավարության ծրագրով նախատեսված ցուցանիշներին (2026 թվականին՝ սպառողական զամբյուղի արժեքին) համապատասխանեցնելու սանդղակ: Ըստ այդմ, կենսաթոշակների միջին և նվազագույն չափերը կկազմեն.

---

[1] https://armstat.am/file/article/sv_03_21a_6200.pdf

[2] https://armstat.am/file/article/sv_03_21a_6200.pdf

| | Պար. Զմբ | Սպառ. Զմբ | Նվ. կենս | Նվ. կենս/ Պար. Զմբ | Միջին կենս | Միջին կենս/ Սպառ. Զմբ |
|---|---|---|---|---|---|---|
| 2022 թ. հունվարի 1-ից | 37861 | 70044 | 37861 | 100 % | 49031 | 70 % |
| 2023 թ. հունվարի 1-ից | 39754 | 73546 | 39754 | 100 % | 58837 | 80 % |
| 2024 թ. հունվարի 1-ից | 41742 | 77224 | 41742 | 100 % | 65640 | 85 % |
| 2025 թ. հունվարի 1-ից | 43829 | 81085 | 43829 | 100 % | 72976 | 90 % |
| 2026 թ. հունվարի 1-ից | 46020 | 85139 | 46020 | 100 % | 85139 | 100 % |

Ընդ որում, 2021 թվականին հաշվարկված պարենային և սպառողական զամբյուղների արժեքների նկատմամբ տարեկան կիրառվել է 5 տոկոս գնաճ: